ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/228 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	1640302; 1704467	Bio-Rad	"Փաթեթը ներառում է. • 18 x 40.5 x 9.4 սմ հորիզոնական էլեկտրաֆորեզի համակարգ և • 9.2 x 25.5 x 5.6 սմ հորիզոնական էլեկտրաֆորեզի համակարգ • դրանց համապատասխան լրամասեր 18 x 40.5 x 9.4 սմ հորիզոնական էլեկտրաֆորեզի համակարգը բազմաֆունկցիոնալ և հուսալի լուծում է ագարոզային գելերում ԴՆԹ-ի և ՌՆԹ-ի տարանջատման համար: Համակարգը նախատեսված է լաբորատոր լայն կիրառությունների համար և ապահովում է հեշտ օգտագործում, ճշգրիտ արդյունքներ և բարձր վերարտադրելիություն: Սարքը ներառում է 15 × 15 սմ չափսերով ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ թափանցիկ գելային տարրա, գելի ձուլման համակարգ (gel caster), մալուխներով անվտանգության կափարիչ, հարթեցման փուչիկ և սանրեր (15-խոռոչ և 20-խոռոչ) և համապատասխան սնուցման աղբյուր: Բուֆերի տարողունակությունը՝ 1լ: Բրոմֆենոլկապույտ ներկի շարժը 75Վ ռեժիմում մոտ 3 սմ/ժ: Մինչև 30 նմուշ հնարավոր է վերլուծել 25 սմ հեռավորության վրա: Չորս շարք սանրերի միջոցով խցիկը տեղադրում է մինչև 120

				վերլուծական նմուշ: Սարքավորումը ունի QuickSnap տեխնոլոգիայով էլեկտրոդներ, որի շնորհիվ նրանք հեշտ հանվող և մաքրվող են Հիմքային մասում ունի հոսքի ուղղությունը և գելի ճիշտ կողմնորոշում ցույց տվող նշում: Հիմքի վրա ունի ներդիրներ, որոնք թույլ են տալիս հեշտությամբ հանել կափարիչ՝ նվազեցնելով բուֆերի թափվելը, ինչպես նաև կանխել կափարիչի սխալ դիրքը: Ունի ուլտրամանուշակագույն ճառագայթմամբ թափանցիկ գելային սկուտեղներ՝ ֆլուորեսցենտային քանոնով: 9.2 x 25.5 x 5.6 cm հորիզոնական էլեկտրաֆորեզի համակարգը նախատեսված է նուկլեինաթթուների արագ և տնտեսապես արդյունավետ տարանջատման համար, Համակարգը ներառում է 7 × 10 սմ չափսերով ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ թափանցիկ գելային տարրա մինի գելաձուլման համակարգ (mini-gel caster) և նախատեսված է ինչպես ձեռքով գելաձուլման, այնպես էլ պատրաստի գելերի կիրառման համար և համապատասխան սանրեր: Բուֆերի տարողունակությունը 270 մլ: Բրոմֆենոլկապույտ ներկի շարժը 75Վ ռեժիմում մոտ 4,5 սմ/ժ: Լամբդա ԴՆԹ-ի EcoRI կամ HindIII ռեստրիկտազներով մշակված նմուշները վերլուծվում են առավելագույնը 1.5 ժամում 60 Վ լարման դեպքում: ԴՆԹ-ի փոքր բեկորները կարող են առանձնացվել առավելագույնը 15 րոպեում 150 Վ լարման դեպքում: Հիմնական առանձնահատկություններ. • Կոմպակտ հորիզոնական էլեկտրոֆորեզի համակարգ՝ արագ փորձերի համար • 8-30 նմուշի միաժամանակյա տարանջատման հնարավորություն • QuickSnap տեսակի էլեկտրոդներ՝ հեշտ հանման և մաքրման համար • Ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ թափանցիկ գելային սկուտեղներ՝ ֆլուորեսցենտ չափման սանդղակով • Հիմքի երկարացված եզրեր, որոնք ապահովում են կափարիչի հեշտ հանումը, նվազեցնում բուֆերի թափվելու հավանականությունը և թույլ չեն տալիս կափարիչի սխալ տեղադրում • Լրացուցիչ պարագաներ՝ ներառյալ ժապավեն չպահանջող գելաձուլման համակարգ (tape-free casting) • Համատեղելի է ReadyAgarose պատրաստի գելերի հետ, որոնք ամուր տեղադրվում են

			խցիկում՝ ժամանակի խնայողության և վերարտադրելի արդյունքների համար • Համատեղելի է PowerPac Basic սնուցման աղբյուրի հետ Համակարգի լրակազմը ներառում է 20 անցք ունեցող գելային սանր, ֆիքսված բարձրություն, 1.5 մմ հաստություն,2հատ Սանրը ունի 20 անցք և 1.5 մմ հաստություն, ֆիքսված բարձրությամբ: Նախատեսված է վերոնշյալ հորիզոնական էլեկտրոֆորեզի համակարգերի հետ օգտագործման համար: 15 անցք ունեցող գելային սանր, ֆիքսված բարձրություն, 1.5 մմ հաստություն, 2 հատ Փաթեթը պարունակում է 1 հատ գելային սանր՝ 15 անցքով, 1.5 մմ հաստությամբ և ֆիքսված բարձրությամբ: Նախատեսված է վերոնշյալ հորիզոնական էլեկտրոֆորեզի համակարգերի հետ օգտագործման համար Տեղադրումը իրականացվում է մատակարարի համապատասխան սերտիֆիկացված մասնագետի կողմից: ISO9001 և ISO 13485 ստանդարտներին: Ապրանքը նոր է, չօգտագործված և չի պարունակում օգտագործած կամ կիսամաշ դետալներ: Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Համակարգը ներառում է 1 տարի երաշխիք սարքավորման տեղադրումից և աշխատանքային վիճակի բերելուց հետո: Ապրանքը պետք է լինի առնվազն 2025թ արտադրության և մատակարարվի ապրանքին վերաբերող բոլոր փաստաթղթերի հետ միասին: Առկա պետք է լինի արտադրողի հավաստագիր: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում: Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը ազատված է ավելացված արժեքի հարկից, քանի որ ձեռք է բերվելու Appear project 373 Armenia ծրագրի շրջանակներում: (տեղեկանքը կցվում է"

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЪҶҲ-ЭЦЖЦҶҨҎ-26/228 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
2			